ք. Երևան 29.01.2026թ.

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

Խաչիկ Նազարյանի կողմից, հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում, հարուցված կարգապահական վարույթի և հարուցելու հետևանքով նիստեր նշանակելու հրավիրելու մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ՝ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանի, Արմենակ Ադամյանի և Հարություն Գևորգյանի, ուսումնասիրելով Ա/Զ Վարազդատ Դավթյանի /այսուհետ Դիմումատու/ դիմումը՝ ներկայացված «ՍԳԿԿ» ԻԿ-ին, որի պատճենը ներկայացվել է նաև ՀՀ արդարադատության նախարարությանը և ՀՀ սնանկության դատարանի դատավոր Ա. Հովհաննիսյանին, եկավ այն եզրակացության, որ ներկայացված դիմումի առնչությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի «3»-րդ ենթակետի և նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ մասերով սահմանված նորմերի համաձայն՝ կառավարիչի նկատմամբ պետք է հարուցվի կարգապահական վարույթ: Կառավարչի կողմից վարքագծի վերաբերյալ կանոնների հնարավոր խախտումը պարզելու նպատակով 07.05.2025 թ., 06.05.2025 թ., 29.08.2025 թ., 12.09.2025 թ., 13.11.2025 թ. և 05.12.2025 թ. նշանակվել են կարգապահական հանձնաժողովի նիստեր:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կառավարիչի կողմից ներկայացված դիմումի դեմ ներկայացվել է պատասխան-գրություն և դիմումով նաև կառավարիչը խնդրել է դիմումի քննությունը իրականացնել իր բացակայությամբ, ուստի հանձնաժողովի նախագահ Ա. Սարգսյանը առաջարկեց դիմումի քննարկման նպատակով սահմանել հետևյալ հերթականությունը. նախ լսել դիմումատուին, իսկ այնուհետև հարցերի դեպքում դրանք ուղղել դիմումատուին, այնուհետև լսելով դիմումատուին և հետազոտելով վարույթում առկա նյութերը՝ հանձնաժողովը կանցնի կարծիքների արտահայտմանը և այդ կարծիքներից ելնելով՝ կկայացնի որոշում կարգապահական տույժ կիրառելու կամ այն կարճելու վերաբերյալ: Հանձնաժողովի անդամների կողմից նշված առաջարկը ընդունվեց միաձայն:

Հանձնաժողովը ուսումնասիրեց Դիմումատուի կողմից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին ներկայացված սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին դիմումը, որով դիմումատուն հայտնել է, որ ՀՀ սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/3123/04/20 սնանկության գործով 18.02.2021 թվականի վճռով ԱՁ Վարազդատ Դավթյանը ճանաչվել է սնանկ, իսկ 01.03.2021 թվականի որոշմամբ ԱՁ Վարազդատ Դավթյանի սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Խաչիկ Նազարյանը: Ըստ դիմումատուի՝ սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանը թիվ ՍՆԴ/3123/04/20 սնանկության գործի շրջանակում կատարել է հերթական կոպիտ խախտումները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է պարտապան Վարազդատ Դավթյանի իրավունքների հերթական խախտման:

1. Վարազդատ Դավթյանի միանձնյա սեփականությունը հանդիսացող գույքերի 50%- ի նկատմամբ այլ անձի սեփականության իրավունքը ճանաչելը.

Համաձայն անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2477679 վկայականի՝ ՀՀ, ք. Երևան, Նորքի 2 մ/շ, Մոլդովական 24/1 շենքի թիվ 38 հասցեում գտնվող տարածքը միանձնյա սեփականության իրավունքով պատկանում է Վարազդատ Վազգենի Դավթյանին: Դիմումատուն նշել է նաև, որ առկա չէ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ, որով նշված տարածքի 1/2 բաժնի նկատմամբ ճանաչված կլինի Գայանե Ոսկանյանի սեփականության իրավունքը:

Դիմումատուն իր դիմումով նշել է, որ համաձայն անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1800285 վկայականի՝ ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժ, 21 փողոց, տուն 32 հասցեի անշարժ գույքը միանձնյա սեփականության իրավունքով պատկանում է Վարազդատ Վազգենի Դավթյանին: Նշված անշարժ գույքի մասով առկա չէ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ, որով դրա 1/2 բաժնի նկատմամբ ճանաչված կլինի Գայանե Ոսկանյանի սեփականության իրավունքը և դեռ ավելին՝ ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժ, 21 փողոց, տուն 32 հասցեի անշարժ գույքը Վարազդատ Դավթյանը ձեռք է բերել մինչև Գայանե Ոսկանյանի հետ ամուսնության գրանցումը՝ 16.12.1996 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով /հիմքը՝ ՀՀ կադաստրի կոմիտեի 27.09.2022 թվականի No US-27092022-07-0446 տեղեկանքը, թիվ ԱԱ 050492 ամուսնության վկայականը/:

Դիմումատուն հայտնել է, որ ներկայումս վերոնշյալ երկու անշարժ գույքերի վերաբերյալ ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվում է թիվ ԿԴ2/0959/02/15 քաղաքացիական գործը, որի շրջանակում վեճի առարկա է հանդիսանում նաև գույքերի պատկանելության հարցը: Թիվ ԿԴ2/0959/02/15 քաղաքացիական գործը դեռևս գտնվում է նախնական դատական փուլում, իսկ սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանը նշված գործով ներգրավված է որպես Վարազդատ Դավթյանի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ չնայած որ մինչ օրս նշված դատական գործով որևէ նիստի չի մասնակցել և թույլ չի տալիս, որպեսզի Դիմումատուն նույնպես մասնակցի: Դիմումատուն նշել է, որ թիվ ԿԴ2/0959/02/15 քաղաքացիական գործով հայցվոր կողմ հանդիսանում է հենց Գայանե Ոսկանյանը, որտեղից էլ Դիմումատուի մոտ հարց է առաջանում, որ եթե վերջինս հանդիսանում է Վարադատ Դավթյանի գույքերի համասեփականատերը, ապա այդ դեպքում ինչու՞ է նշված գույքերի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով հայց ներկայացրել դատարան:

Միևնույն ժամանակ դիմումատուն նշել է, որ թիվ 17868717 քրեական գործի շրջանակում ևս չի հաստատվել Վարազդատ Դավթյանի միաձնյա սեփականությունը հանդիսացող գույքերի նկատմամբ Գայանե Ոսկանյանի համասեփականատեր լինելու հանգամանքը:

Դիմումատուն նշել է, որ համաձայն թիվ ԱԱ 050492 ամուսնության վկայականի՝ պարտապան Վարազդատ Վազգենի Դավթյանի և Գայանե Մելսիկի Ոսկանյանի ամուսնությունը գրանցվել է 1998թ.-ին, իսկ ամուսնությունը լուծվել 2016թ.-ին՝ թիվ ԿԴ1/1841/02/15 քաղաքացիական գործով 20.10.2016թ.-ի օրինական ուժի մեջ մտած վճռով /կից ներկայացվել է ամուսնության վկայականը, իսկ վճիռն առկա է DataLex դատատեղեկատվական համակարգում/:

Դիմումատուն հայտնել է նաև, որ առհասարակ գոյություն չունի որևէ իրավահաստատող փաստաթուղթ /տվյալ դեպքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտն է կամ սեփականության իրավունքի վկայականը/, որով կհաստատվի Գայանե Ոսկանյանի բաժնային կամ համատեղ սեփականության իրավունքն ինչպես ՀՀ, Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժ, 21 փողոց, տուն 32 հասցեի անշարժ գույքի, այնպես էլ ՀՀ, ք. Երևան, Նորքի 2 մ/շ, Մոլդովական 24/1 շենքի թիվ 38 հասցեում գտնվող տարածքի նկատմամբ: Ըստ Դիմումատուի՝ Գայանե Ոսկանյանը թիվ ՍՆԴ/3123/04/20 սնանկության գործով ուղղակի պարտատեր է, ում պարտքն ամբողջությամբ մարված է, և ով նշված գույքերի նկատմամբ որևէ սեփականության իրավունք չունի:

Դիմումատուն նշել է նաև, որ վեճի առկայության դեպքում ՀՀ-ում սեփականության իրավունքի ճանաչման գործառույթը դատարանի բացառիկ իրավասությունն է:

Վերոնշյալ փաստական հանգամանքների առկայության պայմաններում 27.07.2024 թվականին պարտապան Ա/Ձ Վարազդատ Դավթյանը փոստային ծանուցմամբ ստացել է սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանի ծանուցագիրը, որում ասվում է հետևյալը. «Տեղեկացնում եմ Ձեզ, որ պարտատերերի պահանջները բավարարելու նպատակով և

ղեկավարվելով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածով «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի անկախ գնահատող կազմակերպությունը իրականացրել է ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք 21 փ. 32 տուն և ք. Երևան Մոլդովական 24/1 38 շինության շուկայական արժեքը, որի արժեքները ներկայացնում եմ Ձեզ՝ ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք 21 փ. 32 տուն – 112.450.000 ՀՀ դրամ, ք. Երևան Մոլդովական 24/1 38 շինության – 46.000.000 ՀՀ դրամ»: Միաժամանակ նշել է նաև, որ Գայանե Ոսկանյանը օգտվում է գույքը հետ գնելու նախապատվության իրավունքից /50 տոկոս բաժնեմաս/, ում ներկայացվել է առաջարկ:

Այսպիսով, ըստ Դիմումատուի ստացվում է, որ սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանը բացահայտ կերպով դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից, չարաշահել է սնանկության կառավարչի իր պաշտոնը և միաժամանակ ստանձնել դատարանի բացառիկ իրավասությունը՝ պարտապան Վարազդատ Դավթյանի միանձնյա սեփականությունը հանդիսացող ՀՀ, Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք, 21 փող., 32 հասցեի անշարժ գույքի և ՀՀ, ք. Երևան, Մոլդովական 24/1 շենքի թիվ 38 հասցեում գտնվող տարածքի 1/2-ական բաժնեմասերի նկատմամբ ճանաչելով Գայանե Ոսկանյանի սեփականության իրավունքը, ինչն էլ, ըստ էության, քրեորեն պատժելի արարք է:

2. Պարտատերերի ժողովի, դրա տեղի, վայրի ու ժամի մասին Պարտապանին չծանուցելը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժողովի անցկացման վայրի և ժամանակի մասին ժողովին ներկա գտնվելու իրավունք ունեցող պարտատերերին և պարտապանին կառավարիչը պետք է պատշաճ ծանուցի:

Ծանուցումն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով, իսկ պարտատերերի առաջին ժողովի մասին նաև պատվիրված նամակով ծանուցում է այն քաղաքացիներին, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար (առկայության դեպքում):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժողովին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք պետք է ծանուցվեն ոչ ուշ, քան ժողովի հրավիրման օրվանից 3 օր առաջ, իսկ սույն հոդվածի առաջին մասի երրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերում, հայտարարությունը պետք է հրապարակվի ժողովի հրավիրման օրվանից 5 օր առաջ:

Ըստ դիմումատուի՝ 31.07.2024 թվականին էլեկտրոնային ծանուցմամբ Դիմումատուն ստացել է սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանի կողմից ուղարկված՝ պարտապան Ա/Ձ Վարազդատ Դավթյանի ժողովի հրավիրված պարտատերերի արձանագրությունը և դա այն դեպքում, երբ սույն գործի շրջանակում փաստաբան Քրիստինե Տոնոյանն պատշաճ ծանուցման հասցեն է՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տարոն 2, ՔՇՀ 7, շենք 4, բն. 6-ը, իսկ պարտապան Վարազդատ Դավթյանի պատշաճ ծանուցման հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժ, 21 փողոց, տուն 32-ը:

Ընդ որում, ըստ Դիմումատուի, ուշագրավ է, որ 26.07.2024 թվականին փոստային ծանուցմամբ՝ թիվ LO123716666AM փոստային դասիչի ծրարով, Դիմումատուն ստացել է Խաչիկ Նազարյանի կողմից ուղարկված ի պատասխան գրություն և դրան կից գույքի վաճառքի ծրագիր 1-ը, իսկ պարտապան Վարազդատ Դավթյանը 27.07.2024 թվականին փոստային ծանուցմամբ՝ թիվ LO123682661AM փոստային դասիչի ծրարով ստացել է ծանուցագիր վերտառությամբ մի անօրինական փաստաթուղթ: Այսինքն՝ ըստ Դիմումատուի ստացվում է, որ սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանը փոխանակ պարտապանին և/կամ վերջինիս ներկայացուցչին պատշաճ ծանուցի արդեն իսկ նախատեսված պարտատերերի ժողովի, դրա օրվա, ժամի ու վայրի մասին, դրա փոխարեն նույն ժամանակահատվում այլ գրություններ է

ուղարկել, որոնցում որևէ խոսք չկա արդեն իսկ նախաձեռնված պարտատերերի ժողովի մասին:

Այսպիսով, ըստ Դիմումատուի ստացվում է, որ սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանը չի կատարել պարտատերերի ժողովի օրվա, ժամի և վայրի մասին պարտապանին (կամ նրա ներկայացուցչին) ծանուցելու՝ Օրենքով ամրագրված իր պարտականությունը և միևնույն ժամանակ խախտել է պարտապան Վարազդատ Դավթյանի՝ պարտատերերի ժողովին մասնակցելու Օրենքով ամրագրված իրավունքը: Ընդ որում, ուսումնասիրելով թիվ ՍՆԴ/3123/04/20 սնանկության գործով 29.07.2024 թվականին կայացած պարտատերերի ժողովի արձանագրությունը և բացահայտելով դրանում ներառված տեղեկությունների կեղծ լինելը, ըստ Դիմումատուի կարելի է փաստել, որ սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանի կողմից պարտատերերի ժողովին պարտապանին և/կամ վերջինիս ներկայացուցիչ Քրիստինե Տոնոյանին չծանուցելը եղել է ուղղակի դիտավորություն, մասնավորապես՝ ժողովի քննարկմանն առաջադրված հարցերի վերաբերյալ, սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանն ու պարտատեր Գայանե Ոսկանյանը /ում պարտքն արդեն մարված է/ դիմումատուի ներկայացուցչին իրականությանը չհամապատասխանող տվյալներ են ներկայացրել՝ այդ կերպ ազդելով մյուս պարտատերերի որոշման վրա, մինչդեռ պարտապանի և վերջինիս ներկայացուցչի ներկայության դեպքում չէին կարող կեղծ տվյալներ ներկայացնել և իրականությանը չհամապատասխանող հայտարարություններ անել:

3. Իր դիմումով Դիմումատուն նշել է, որ 29.07.2024 թվականի պարտատերերի ժողովին մասնակցող Պարտատերերին ներկայացվել է կեղծ տեղեկություններ, մասնավորապես՝

Սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանը, սնանկության գործով պարտապան Վարազդատ Դավթյանից և վերջինիս ներկայացուցիչ Քրիստինե Տոնոյանից գաղտնի պահելով 29.08.2024 թ. իր կողմից նախաձեռնված պարտատերերի ժողովի, դրա օրվա, ժամի և վայրի մասին, անց է կայացրել պարտատերերի ժողովը, որտեղ նույն գործով պարտատեր Գայանե Ոսկանյանի /ում պարտքն ամբողջությամբ մարված է/ հետ միասին իրականությանը չհամապատասխանող տվյալներ է ներկայացրել՝ այդ կերպ ազդելով ժողովին ներկա մյուս երկու պարտատերերի կամքի վրա: Մասնավորապես՝ պարտապան Վարազդատ Դավթյանի բացարձակ սեփականությունը հանդիսացող ՀՀ, ք. Երևան, Նորքի 2 մ/շ, Մոլդովական 24/1 շենքի թիվ 38 հասցեի անշարժ գույքը ներկայացվել է որպես համատեղ սեփականություն, իսկ պարտապան Վարազդատ Դավթյանի մասնակցությամբ դատական գործերի քանակը նշվել է 3-ը:

Ըստ Դիմումատուի՝ պարտատերերի ժողովին սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանը պարտատեր Գայանե Ոսկանյանի հետ միասին ներկայացրել է, թե իբրև պարտապան Վարազդատ Դավթյանի մասնակցությամբ առկա է ընդամենը երեք դատական գործ՝ թիվ ԿԴ2/0959/02/15, թիվ ԵԿԴ/0908/02/17 և թիվ ԵԱՆԴ/2001/02/17 և որ նշված գործերից երկուսը՝ թիվ ԵԿԴ/0908/02/17 և թիվ ԵԱՆԴ/2001/02/17 գործերը, գտնվում են ավարտի փուլում: Մինչդեռ Դիմումատուն նշել է, որ հենց նույն օրը սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանի կողմից ՀՀ փաստաբանների պալատ մուտք արված՝ փաստաբան Քրիստինե Տոնոյանի կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին դիմում-բողոքում Վարազդատ Դավթյանի մասնակցությամբ գործերի թիվը նշվել է 15 գործ:

Այսպիսով, ըստ Դիմումատուի ստացվում է, որ միևնույն ժամանակահատվածում սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանի կողմից կազմված երկու տարբեր փաստաթղթերում ժողովի արձանագրությունում և ՀՀ փաստաբանների պալատին հասցեագրված դիմում-բողոքում միևնույն հանգամանքի /դատական գործերի քանակի/ վերաբերյալ միմյանց էականորեն հակասող տեղեկատվություն է ներկայացվել, մասնավորապես՝ փաստաբան Քրիստինե Տոնոյանի կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին 27.07.2024 թ.-ին ուղարկված դիմում-բողոքում

Խաչիկ Նազարյանը վկայակոչել է Վարազդատ Դավթյանի մասնակցությամբ 15 դատական գործերի առկայության մասին, իսկ ընդամենը երկու օր անց՝ 29.07.2024 թ.-ին տեղի ունեցած պարտատերերի ժողովի արձանագրությունում, հակասելով ինքն իրեն, վկայակոչել է Վարազդատ Դավթյանի մասնակցությամբ ընդամենը երեք գործի առկայության մասին:

4. Իր դիմումով Դիմումատուն նշել է, որ 29.07.2024 թվականի պարտատերերի ժողովի արձանագրությունը կազմվել է կոպիտ սխալներով, այն է.

Ըստ Դիմումատուի՝ 29.07.2024 թվականի պարտատերերի ժողովի արձանագրությունից հետևում է, որ դրան մասնակցել են 3 /երեք/ պարտատեր, մինչդեռ հենց նույն արձանագրությամբ նշվել է, որ քվեարկությանը մասնակցել և դեմ է քվեարկել երկու պարտատեր, ձեռնպահ կամ կողմ ոչ ոք չի քվեարկել, այսինքն՝ ժողովին մասնակցած երրորդ պարտատիրոջ դիրքորոշման վերաբերյալ տեղեկությունը բացակայում է:

5. Իր դիմումով Դիմումատուն նշել է, որ սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանի կողմից սնանկության կառավարչի լիազորություններն իրականացվել են ի շահ պարտատեր Գայանե Ոսկանյանի, այն է՝

Թիվ ՄՆԴ/3123/04/20 սնանկության գործով 29.07.2024 թվականին կայացած պարտատերերի ժողովին սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանի կողմից քվեարկության դրված փաստաբան ներգրավելու հարցը սույն գործով առկա փաստական հանգամանքների առկայության պայմաններում, ըստ էության, պարտատերերի ժողովի քննարկման ենթակա հարց չէր: Մասնավորապես՝ դեռևս 14.05.2024 թվականին Խաչիկ Նազարյանը փաստաբան Քրիստինե Տոնոյանին հասցեագրված գրությամբ հայտնել է, որ /բառացի մեջբերում/ «Միաժամանակ հայտնում եմ, որ չեմ հանդիսանում փաստաբան և Ձեզ վերաբերելի բազմաթիվ, տարբեր դատարաններում լսվող քաղաքացիական գործերով ԿԴ1/1155/02/18, ԵԱՆԴ/2001/02/17, ԿԴ2/0959/02/15, ՄՆԴ/3123/04/20, ԵԴ/23931/02/18, ԵԿԴ/0908/02/17, ԵԱՆԴ/0310/02/17, ԵԱՆԴ/0310/02/17, ԿԴ1/1656/02/16, ԿԴ1/1841/02/15, ԵԴ/17477/02/18, ԵԴ/15062/02/18, ԵԱՆԴ/4675/02/17, ԵԱՆԴ/1479/02/16 ԵԴ/21846/02/18, պատրաստվում եմ իրավաբանական ծառայությունների մատուցելու պայմանագիր կնքել փաստաբանի կամ փաստաբանական գրասենյակի հետ, որի վճարումը կկատարվի Ձեր միջոցների հաշվին»: Այսինքն՝ ըստ Դիմումատուի ստացվում է, որ սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանը մի կողմից գիտակցում է, որ փաստաբան չէ և հետևաբար չի կարող արդյունավետ կերպով իրականացնել Վարազդատ Դավթյանի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, մյուս կողմից՝ փաստաբան ներգրավելու հարցը քննարկում է թիվ ԿԴ2/0959/02/15, թիվ ԵԱՆԴ/4002/02/17 և թիվ ԵԿԴ/0908/02/17 քաղաքացիական գործերով հակառակորդ կողմ հանդիսացող Գայանե Ոսկանյանի ու նրա ներկայացուցչի հետ: Այլ կերպ ասած՝ ըստ Դիմումատուի, սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանը ԿԴ2/0959/02/15 և թիվ ԵԿԴ/0908/02/17 քաղաքացիական գործերով սկզբնական հայցով հայցվոր, իսկ թիվ ԵԱՆԴ/4002/02/17 քաղաքացիական գործով հակընդդեմ հայցով հայցվոր Գայանե Ոսկանյանից և վերջինիս ներկայացուցիչ Ս. Մալխասյանից թույլտվություն է հարցրել նշված դատական գործերով հակառակորդ կողմ հանդիսացող Վարազդատ Դավթյանի իրավունքների պաշտպանության համար փաստաբան ներգրավելու համար: Մինչդեռ բնական է, որ Գայանե Ոսկանյանին և վերջինիս ներկայացուցչին ձեռնտու է, որ թիվ ԿԴ2/0959/02/15, թիվ ԵԱՆԴ/4002/02/17 և թիվ ԵԿԴ/0908/02/17 քաղաքացիական գործերով իրենց հակառակորդ կողմը՝ Վարազդատ Դավթյանը չունենա ներկայացուցիչ և լինի անպաշտպան, ինչն էլ հնարավորություն կտա նշված դատական գործերն ավարտել ի շահ իրենց: Այսպիսով, ըստ Դիմումատուի՝ կարելի է փաստել, որ սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանը թիվ ՄՆԴ/3123/04/20 սնանկության գործի շրջանակում իր լիազորություններն իրականացնում է բացառապես ի շահ Գայանե Ոսկանյանի, ինչը, ըստ Դիմումատուի, ոչ միայն օրենքի, այլև կառավարչի վարքագծի կանոնների կոպիտ խախտում է:

6. Ըստ Դիմումատուի՝ սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանը չի տիրապետում սնանկության կառավարչի գործունեությունն անմիջապես կարգավորող նորմատիվ իրավական ակտերին:

Սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանը չի տիրապետում իր գործունեությանն անմիջապես առնչվող նորմատիվ իրավական ակտերի դրույթներին՝ «Սնանկության մասին» և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքներին, մասնավորապես՝ վերջինս չգիտի, որ կոնկրետ այս կամ այն սնանկության գործի նկատմամբ կիրառելի են իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի դրույթները և «Սնանկության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքների որոշակի դրույթներն արդեն իսկ հարուցված սնանկության գործերի նկատմամբ կիրառելի են միայն այն դեպքում, երբ անցումային դրույթներով դրանց հետադարձ ուժ է տրվում:

Թիվ ՍՆԴ/3123/04/20 սնանկության գործի շրջանակում սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանը 2020 թվականին հարուցված սնանկության գործի նկատմամբ կիրառել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1.1. մասի դրույթը, որը սակայն սույն դեպքում կիրառելի չէ, քանի որ նշված նորմին հետադարձ ուժ չի տրվել:

Այսպիսով, ըստ Դիմումատուի՝ կարելի է փաստել, որ սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանը չի տիրապետում ՀՀ օրենսդրության ամենատարրական կանոններին, ինչն էլ չի կարող իր բացասական ազդեցությունը չթողնել որպես սնանկության կառավարիչ վերջինիս մասնակցությամբ սնանկության գործերի ընթացքի ելքի վրա: Ասվածի վառ ապացույցն են թիվ ՍՆԴ/3123/04/20 սնանկության գործի շրջանակում սնանկության կառավարչի հերթական կոպիտ խախտումներն ու թերացումները:

Ըստ Դիմումատուի՝ կարելի է փաստել նաև, որ սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանը թիվ ՍՆԴ/3123/04/20 սնանկության գործի շրջանակում շարունակում է ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորել, ինչի արդյունքում թույլ է տալիս ինչպես «Սնանկության մասին» օրենքի դրույթների, այնպես էլ՝ կառավարիչների մասնագիտական վարքագծի կանոնների խախտումներ: Միևնույն ժամանակ Դիմումատուն նշել է, որ այդ խախտումներն ունեն շարունակական բնույթ:

Ըստ Դիմումատուի՝ վկայակոչված փաստերից և կից ներկայացված փաստաթղթերից հետևում է, որ սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանը խախտել է «Սնանկության գործով կառավարչի վարքագծի կանոնագրքի» 1.1, 1.3, 1.4, 1.5, 1.6, 1.7, 1.8, 1.10, 1.11, 1.12, 1.18, 1.22, 1.25,1.30, 1.32, 1.33, 2.1, 2.2, 2.6, 3.5, 6.1, 7.5 և 7.8 դրույթների պահանջները:

Միաժամանակ, Դիմումատուն իր դիմումով նշել է, որ դեռևս իրեն հնարավորություն չի տրվել գործի նյութերին ամբողջությամբ ծանոթանալ, ուստի Դիմումատուն չի բացառում, որ ծանոթանալուց հետո ի հայտ գան սույն գործով՝ սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանի կողմից թույլ տրված այլ խախտումներ ևս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.2-րդ և 27.3-րդ հոդվածների դրույթներով՝ Դիմումատուն խնդրել է սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և համապատասխան հիմքերի առկայության դեպքում վերջինիս ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, Դիմումատուն «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպությանն ուղղված 06.08.2025 թ.-ի գրությամբ հայտնել է, որ Ա/Ձ Վարազդատ Դավթյանի դիմումի հիման վրա սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի հունիսի 6-ի նիստը հետաձգվել է այն պատճառաբանությամբ, որ թիվ ՍՆԴ/3123/04/20 սնանկության գործով դատարան ներկայացված միջնորդությամբ արծածված որոշ հանգամանքներ վերաբերելի են Խաչիկ Նազարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթին:

Դիմումատուն հայտնել է, որ քանի որ վկայակոչված միջնորդությունը վերաբերում է բացառապես ՀՀ, ք. Երևան, Մոլդովական փողոց 24/1 թիվ 38 տարածքին (միջնորդության պատճենն առկա է կարգապահական վարույթի նյութերում), իսկ միջնորդության առնչությամբ դեռևս առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, ուստի հրաժարվում է սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումում՝ ՀՀ, ք. Երևան, Մոլդովական փողոց 24/1 թիվ 38 տարածքի առնչությամբ վկայակոչված հիմքերից և խնդրել է դիմումը քննել և որոշում կայացնել դրանում վկայակոչված մնացած հիմքերի շրջանակում:

«Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 3.4 կետի հիմքով սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի /այսուհետ Կառավարիչ/ կողմից ներկայացվել է դիրքորոշում, որով վերջինս հայտնել է, որ Ա/Ձ Վարազդատ Դավթյանի փաստաբանի նույնաբովանդակ դիմում բողոքը արդեն իսկ լսվել է 2024 թ., սակայն կրկին հայտնել է, որ ՀՀ սնանկության դատարանի 18.02.2021 թ. վճռով ՍՆԴ 3123/04/20 Ա/Ձ Վարազդատ Դավթյանը ճանաչվել է սնանկ և նույն դատարանի 01.03.2021 թ. որոշմամբ նա նշանակվել է սնանկության գործով կառավարիչ: Ըստ կառավարչի՝ Ա/Ձ Վարազդատ Դավթյանի նկատմամբ ՀՀ սնանկության դատարանի 09.11.2021 թ. որոշմամբ իրականացվել է գործունեության դադարեցման գործընթաց: Կառավարիչը հայտնել է նաև, որ Վարազդատ Դավթյանի կինը՝ Գայանե Ոսկանյանը, հանդիսանում է թիվ ՍՆԴ 3123/04/20 գործով պարտատեր, և Գայանե Ոսկանյանը մինչ սնանկության գործընթաց իրականացնելը տնօրինում էր ք. Երևան, Մոլդովական 24/1 թիվ 38 տարածքը, որը գույքագրվել է և ի պահ է հանձվել նույն Գայանե Ոսկանյանին՝ համապատասխան ակտով: Գույքագրման ակտը ստորագրել է պարտապանը, ով մշտապես պահանջում է կառավարիչից համասեփականատեր Գայանե Ոսկանյանին հանել տարածքից և ճանաչել իրեն որպես միակ սեփականատեր: ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԿԴ2/0959/02/15 գործով 18.12.2015 թվականի օրինական ուժ ստացած որոշմամբ արգելվել է Վարազդատ Դավթյանին կատարել ք. Երևան, Մոլդովական 24/1 թիվ 38 տարածքի տնօրինման, տիրապետման և օգտագործման հետ կապված ծանկացած գործողություն ... /դատավոր Է. Սեդրակյան/:

Կառավարիչը իր դիրքորոշմամբ հայտնել է, որ ք. Երևան Մոլդովական 24/1 թիվ 38 տարածքը սահմանված կարգով գնահատվել է անկախ գնահատող կազմակերպության կողմից, որի ընթացքի մասին ծանուցվել են բոլոր կողմերը, այդ թվում կինը՝ Գայանե Ոսկանյանը և պարտապան Վարազդատ Դավթյանը: Գործող օրենսդրությանը համաձայն՝ Գայանե Ոսկանյանին գրավոր ներկայացվել է առաջարկ պարտապանի բաժինը հետ գնելու վերաբերյալ՝ որպես համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի համասեփականատեր: Կառավարիչի առաջարկը ընդունվել է Գայանե Ոսկանյանի կողմից և սնանկության հատուկ հաշվին օրենքով սահմանված կարգով կատարվել է վճարում՝ 23 մլն ՀՀ դրամի չափով: Այնուհետև կառավարիչը դատարանին է ներկայացրել միջնորդություն գույքը Գայանե Ոսկանյանին Վարազդատ Դավթյանի 50 տոկոս բաժինը համասեփականատիրոջը վաճառելու վերաբերյալ, որը դատարանի 11.09.2024 թ. որոշմամբ մերժվել է: Կառավարիչը հայտնել է, որ 08.10.2024 թ.-ին ՀՀ վերաքննիչ դատարան է ներկայացվել վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ դատարանի 20.12.2024 թ. որոշմամբ բավարարվել է: Ըստ կառավարչի՝ ՀՀ վերաքննիչ դատարանը իր որոշմամբ կառավարչի բոլոր գործողությունները ճանաչել է իրավաչափ:

Կառավարիչը, մեջբերելով 20.12.2024 թ.-ի ՀՀ վերաքննիչ դատարան որոշումը, նշել է, որ դատարանը արձանագրել է որ այլ քաղաքացիական գործի առկայությունը նույն անշարժ գույքի վերաբերյալ չի կարող հիմք հանդիսանալ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 77-րդ

հոդվածի 1.1 մասի հիմքով ներկայացրած միջնորդությունը մերժելու և նման կերպ համասեփականատիրոջ իր գնելու նախապատվության իրավունքից անարգել օգտվելու համար /գործ ԿԴ2/0959/02/15/: ՀՀ վերաքննիչ դատարանը արձանագրել է նաև, որ համապատասխանաբար քաղաքացիական գործի առկայությունը չի կարող խոչընդոտել սնանկության գործի վարույթին:

Կառավարիչը իր դիրքորոշմամբ նշել է նաև, որ Ա/Ձ Վարազդատ Դավթյանի փաստաբանը իրեն է դիմել իր հետ ծառայություններ մատուցելու պայմանագիր կնքելու պահանջով: Դիմումը քննարկելու համար կառավարիչը հրավիրել է ժողով լսելու բոլոր պարտատերերի կարծիքները, Ա/Ձ Վարազդատ Դավթյանի փաստաբան Քրիստինե Տոնոյանին գրավոր մերժել է և չի կնքել վերջինիս հետ պայմանագիր: Կառավարիչը հայտնել է, որ Ա/Ձ Վարազդատ Դավթյանի փաստաբանի կողմից 27.11.2024 թ. միջնորդություն է ներկայացվել դատարան՝ պարտավորեցնելու սնանկության գործով կառավարիչին կնքելու փաստաբան Քրիստինե Տոնոյանի հետ իրավաբանական ծառայություններ մատուցելու պայմանագիր, որը ՀՀ սնանկության դատարանի 30.12.2024 թ. որոշմամբ թողնվել է առանց քննարկման: Փաստաբան Քրիստինե Տոնոյանը ՀՀ վերաքննիչ դատարան ներկայացրել է բողոք՝ պարտավորեցնելու կառավարիչին կնքելու վերջինիս հետ պայմանագիր: ՀՀ վերաքննիչ դատարանի 10.03.2025 թ. որոշմամբ բողոքը մերժվել է:

Կառավարիչը հայտնել է, որ Վարազդատ Դավթյանի և նրա փաստաբան Քրիստինե Տոնոյանի կողմից սնանկության գործով կառավարիչի անօրինական գործողությունների դեպքով ՀՀ դատախազություն հաղորդում է ներկայացվել, որի վերաբերյալ հարուցվել է թիվ 09120724 քրեական վարույթը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածի հիմքով: ՀՀ քննչական կոմիտեի Երևանի Քանաքեռ Զեյթուն բաժնի քննիչ Մ. Հարությունյանի 31.03.2025 թ.-ի որոշմամբ քրեական վարույթը կարճվել է, որը վերջնական է և ենթակա չէ բողոքարկման: Ըստ կառավարչի՝ այնուհետև Ա/Ձ Վարազդատ Դավթյանը կառավարիչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու միջնորդությամբ դիմել է ՀՀ սնանկության դատարան՝ նշելով իր բողոքում ենթադրյալ բոլոր խախտումները, որը կատարել է կառավարիչը: ՀՀ սնանկության դատարանը 10.06.2024 թ. որոշմամբ միջնորդությունը մերժել է: Վարազդատ Դավթյանի և նրա փաստաբան Քրիստինե Տոնոյանի կողմից ՀՀ վերաքննիչ դատարան ներկայացվել է բողոք: ՀՀ վերաքննիչ դատարանը 12.12.2024 թ. որոշմամբ բողոքը մերժել է՝ անփոփոխ թողնելով դատարանի 10.06.2024 թ.-ի որոշումը: Կառավարիչը կից ներկայացրել է ՀՀ վերաքննիչ դատարանի 12.12.2024 թ. որոշումը:

Կառավարիչը վերլուծելով պարտապան Ա/Ձ Վարազդատ Դավթյանի և նրա փաստաբան Քրիստինե Տոնոյանի գործողությունները՝ եկել է այն եզրահանգման, որ նրանց բոլոր գործողությունները նպատակ են հետապնդում անհեթեթ բողոքներով արհեստականորեն ձգձգելու սնանկության վարույթը, թույլ չտալու կառավարիչի կողմից իրականացնելու օրենքով սահմանված իր լիազորությունները, որի արդյունքում տուժում են պարտատերերի օրինական շահերը և ծանրաբեռնվում է դատարանի աշխատանքը, ուստի խնդրել է բողոքը մերժել:

Կառավարիչի կողմից ներկայացվել է մեկ այլ նույնաբովանդակ դիրքորոշում, որին հանձնաժողովը չի անդրադառնում, առաջին պատասխանին նույնաբովանդակ լինելու պատճառով:

Դիմումատուն իր բանավոր հայտարարություններով պնդեց իր կողմից ներկայացված դիմումը և խնդրեց կառավարիչ Խաչիկ Նազարյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, նիստի ընթացքում կարգապահական հանձնաժողովի նախագահ Ա. Սարգսյանը խնդրեց հստակեցնել ներկայացված բողոքը, որին ի պատասխան՝ Ա/Ձ Վարազդատ Դավթյանը և նրա ներկայացուցիչ՝ Քրիստինե Տոնոյանը հայտնեցին, որ նախ

կառավարչի կողմից որպես խախտում են համարում այն արարքը, որ կառավարիչը 1996թ.-ին ձեռք բերված Ջրվեժի տունը համարել է 1998-թ.-ին ամուսնության հետևանքով համատեղ ձեռքբերված գույք և առաջարկ է ներկայացրել պարտապան Վարազդատ Դավթյանի կնոջը նախապատվության իրավունքից օգտվելու, երկրորդը՝ կառավարչի կողմից հրավիրվել է պարտատերերի ժողով, որում կառավարիչը քննարկման առարկա է դարձրել պարտապանին փաստաբան չտրամադրելու հարցը, սակայն նշված ժողովի վայրի և ժամի մասին պարտապանը պատշաճ չի ծանուցվել: Իսկ կայացած ժողովի ընթացքում, ըստ կազմված արձանագրության, մասնակցել են թվով երեք մասնակից, սակայն քվեաթերթիկով քվեարկել են թվով երկու մարդ, և հասկանալի չէ, թե ով է կողմ, դեմ կամ ձեռնպահ քվեարկել: Ք. Տոնոյանը նշեց, որ չնայած նրան, որ Վարազդատ Դավթյանը բողոքարկել է նշված ժողովի որոշումը, և դատարանը բավարարել է բողոքը, և դատարանի որոշմամբ վերացվել է պարտատերերի ժողովի որոշումը, սակայն բողոքը վերաբերելի է կառավարիչի գործողություններին, մասնավորապես՝ պարտապանին ժողովին չծանուցելու հանգամանքին, որն էլ նշվել է հենց նշված դատարանի որոշմամբ, որ կառավարիչը պարտավոր էր ծանուցել պարտապանին ժողովի մասին՝ չխախտելով նրա իրավունքները: Բացի այդ կառավարիչը պարտատերերի ժողովի ժամանակ կեղծ տեղեկություններ է հայտնել պարտատերերին, այն է՝ չնայած նրան, որ պարտապանի սնանկության վարույթին առնչվող թվով երեք գործ է առկա, սակայն ժողովին ներկայացվել է, որ պարտապանի սնանկության վարույթին առնչվող թվով 12 կամ 13 գործ է առկա, ինչպես նաև կառավարչի կողմից ՀՀ փաստաբանների պալատին կարգապահական վարույթ հարուցելու մասին բողոք է ներկայացվել, որով նույնպես ներկայացրել է, որ իբրև թե փաստաբան Ք. Տոնոյանի մոտ առկա են թվով 12 գործ, չնայած նրան, որ ինքն է հենց նշում որ առկա են թվով 3 քաղաքացիական գործեր: Նման պայմաններում, կեղծ տեղեկություններ հայտնելով պալատին, նա կառավարչին հարիր գործելաոճ չի ցուցաբերել: Միաժամանակ Դիմումատուն նշեց, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Վարազդատ Դավթյանի գույքերին վերաբերվող առկա են քաղաքացիական գործեր և անհրաժեշտություն է առաջացել պաշտպանել պարտապանի շահերը դատարանում, ուստի Ք. Տոնոյանը առաջարկել է իր՝ որպես փաստաբանի անվճար ծառայությունները, որից կառավարիչը հրաժարվել է:

Այնուհետև հանձնաժողովի նախագահ Ա. Սարգսյանը հանձնաժողովի անդամներից հետաքրքրվեց, թե արդյո՞ք հանձնաժողովի մոտ առկա են հարցեր Դիմումատուին և նրա ներկայացուցիչներին, որին ի պատասխան՝ հանձնաժողովի անդամները հայտնեցին, որ հարցեր չունեն և Խաչիկ Նազարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը համարվեց ավարտված:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարգապահական հանձնաժողովը նախ արձանագրում է այն փաստը, որ հանձնաժողովը կարող է անդրադառնալ դիմումում նշված միայն այն հանգամանքներին, որոնք ապացուցվում են դիմում ներկայացնողի և կառավարչի կողմից ներկայացված փաստաթղթերով, դիմումներով և ապացույցներով: Հանձնաժողովը չի կարող անդրադառնալ այն հանգամանքներին, որոնք հիմնված են լոկ հայտարարությունների վրա, որոնք կատարված են առանց համապատասխան փաստական և իրավական հիմքերի: Նախ հարկ է նշել, որ երբ հանձնաժողովը անդրադառնում է կառավարչի կողմից կատարված սխալ և /կամ/ ոչ իրավաչափ գործողությունների դիտավորությանը, հանձնաժողովը կարող է անդրադառնալ միայն կառավարչի կողմից կատարված այն գործողություններին, որոնք կառավարիչը ակնհայտորեն իմացել է կամ պարտավոր էր իմանալ, քանի որ այդ պարտականությունները և պարտավորությունները կառավարչի մասնագիտական պարտադիր իմացություններն են:

Հանձնաժողովը փաստում է այն հանգամանքը, որ հանձնաժողովը չի կարող և չպետք է անդրադառնա այնպիսի հանգամանքներին, որոնք կրում են անձնական բնույթի հարցեր:

Հանձնաժողովը, անդրադառնալով ինչպես Դիմումատուի կողմից ներկայացված բողոք-դիմումին, այնպես էլ կառավարչի կողմից ներկայացված առարկությանը և երկու կողմից ներկայացված ապացույցներին, գալիս է այն եզրակացության, որ կառավարչի կողմից վարքագծի կանոնների խախտում կատարված չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Նախ անդրադառնալով այն հարցին, որ կառավարիչը չի ծանուցել ժողովի անցկացման մասին պարտապանին և ժողովի ընթացքում կազմվել է իրականությանը չհամապատասխանող արձանագրություն, հանձնաժողովը փաստում է, որ անկախ ցանկացած խախտումների և ժողովի ընթացքում կազմված համապատասխան արձանագրությունների՝ նշված ժողովի որոշումը բողոքարկվել է, և դատարանի որոշմամբ այդ ժողովի որոշումը վերացվել է: Հանձնաժողովը փաստում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը նախատեսում է, որ դատավորն իր նախաձեռնությամբ, պարտատերերի խորհրդի կամ ժողովի կամ պարտատիրոջ կամ պարտապանի միջնորդությամբ պետք է վաղաժամկետ դադարեցնի կառավարչի լիազորությունները, եթե վերջինս չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում սույն օրենքով սահմանված իր լիազորությունները կամ սույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի կատարում իր քաղաքացիական պատասխանատվության ապահովագրումը: Նշվածի կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ չնայած նրան, որ դիմում-բողոքը ներկայացվել է միայն ժողովի որոշումը վերացնելու մասով, սակայն նշված իրավանորմով դատարանը իրավազոր է նաև խախտումների առկայության դեպքում ինքնուրույն ազատել սնանկության գործով կառավարիչին իր պարտականություններից, որը տեղի չի ունեցել:

Ինչ վերաբերվում է դիմումատուի այն պնդմանը, որ կառավարչի կողմից խախտվել են օրենքով և իրավական ակտերով սահմանված կանոնները, ինչպես նաև անդրադառնալով պարտապանի կնոջը՝ որպես համատեղ սեփականատիրոջ ճանաչելու մասով ծանուցմանը, ապա հանձնաժողովը եկավ այն եզրակացության, որ կառավարչի կողմից նշված ծանուցումը ուղարկվել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1.1 մասով նախատեսված հիմքով, իսկ նշված հոդվածով սահմանված հետագա գործողությունները պայմանավորված են կառավարիչի կողմից նույն օրենքի 77-րդ հոդվածի հիմքով այն իրացնելու գործողությամբ: Այսինքն՝ կառավարչի կողմից նման գործողություններ չեն կատարվել և նման պայմաններում չի խախտվել որևիցե մի անձի իրավունքները: Առավել ևս նման գործողությունները չեն կարող համարվել որպես կառավարչի վարքագծի կանոնների խախտում, ինչը կարող է խաթարել կառավարչի բարի հանբավը:

Հանձնաժողովը, անդրադառնալով Դիմումատուի այն հարցին, որ կառավարիչի կողմից կեղծ տվյալներ են ներկայացվել փաստաբանների պալատին, եկավ այն եզրակացության, որ Դիմումատուի ներկայացուցիչը կարող է դիմել համապատասխան մարմնին կամ դատական ատյաններին իր նկատմամբ հերյուրանք տարածելու մասով:

Իսկ ինչ վերաբերվում է Դիմումատուի այն պնդմանը, որ կառավարիչը չի լիազորել Ք. Տոնոյանին, որպեսզի վերջինս իրականացնի Վարազդատ Դավթյանի իրավունքների պաշտպանությունը դատարանում, ապա հանձնաժողովը փաստում է, որ սնանկության գործով կառավարիչը, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, սույն օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելիս գործում է պարտապանի անունից և իր պատասխանատվությամբ: Այսինքն՝ կառավարիչը իրավունք ուներ չվստահել փաստաբան Ք. Տոնոյանին՝ չնայած նրան, որ փաստաբանը առաջարկել է անվճար ծառայություններ:

Սույն եզրակացությանը պետք է հավելել նաև այն, որ դիմումում նշված որոշ հանգամանքներ Դիմումատուն նշել է նաև ՀՀ սնանկության դատարանին ներկայացված

կառավարիչի լիազորությունները վաղաժամկետ դադարացնելու մասին միջնորդության մեջ: Հանձնաժողովը փաստում է, որ նշված միջնորդությունը ՀՀ սնանկության դատարանը համարել է անհիմն, և ՀՀ սնանկության դատարանի 10.06.2024 թ.-ի որոշմամբ միջնորդությունը մերժվել է:

Այսպիսով, հանձնաժողովը՝ մասնակցությամբ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Արմենակ Ադամյանի, Լուսինե Սարգսյանի և Հարություն Գևորգյանի, ուսումնասիրելով սույն կարգապահական վարույթի նյութերը և հիմք ընդունելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27,4 հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ ենթակետերի պահանջները, միաձայն կողմ քվեարկեցին և Խաչիկ Նազարյանի նկատմամբ կարգապահական վարույթը կարճելու մասին որոշում կայացրին:

Միաժամանակ հայտնվում է այն մասին, որ տեխնիկական պատճառներից ելնելով /ձայնագրող սարքի անսարքության/՝ կարգապահական նիստի որոշ ձայնագրությունները չեն պահպանվել:

Արման Սարգսյան

Արմենակ Ադամյան

Լուսինե Սարգսյան

Հարություն Գևորգյան